ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

Ծնողական խորհրդի արտահերթ նիստը կայացել է 2023 թվականի դեկտեմբերի25-ին

Ծնողական խորհրդի արտահերթ նիստին ծնողական խորհրդի 32 անդամներից մասնակցում էին ծնողական խորհրդի թվով32 անդամներ ,դպրոցի տնօրեն Խանում Ղազարյանը, տնօրենի ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Վիոլետա Գրիգորյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս.Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի հավակնորդ Խ.Ղազարյանի հետ հանդիպում զարգացման ծրագիր կազմելու համար առաջարկություններ լսելու նպատակով:

/Զեկուցող՝տնօրեն՝ Խ.Ղազարյան/

Խ.Ղազարյանը ծնողական խորհրդի համար կարդաց «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման» կարգը,որի համաձայն տնօրենի հավակնորդը պետք է հանդիպի ծնողական խորհրդի հետ՝ զարգացման ծրագիր կազմելու համար առաջարկություններ լսելու նպատակով:

Դպրոցի գործունեության վերաբերյալ դրական կարծիքներ արտահայտեցին Գ. Սարգսյանը, Ա. Գալստյանը, Ա. Պետոյանը և հանդես եկան ստորև ներկայացվող առաջարկներով.

1.Ապաստարանի ստեղծում,որը կապահովի սովորողների անվտանգությունը

2.Լաբորատորիաների վերազինում,բնագիտական առարկաների առարկայական ծրագրերի յուրացումն ապահովելու համար

3.«Արմաթ» լաբորատորիայի ստեղծում,որը հնարավորություն կտա սովորողների ինժեներական միտքը զարգացնելուն և կնպաստի մասնագիտական կողմնորոշման ձևավորմանը :

4.Ծնողների համար «Ռեսուրս կենտրոնի» ձևավորում՝ ծնողների իրավագիտակցությունը բարձրացնելուն միտված սեմինարներ,միջոցառումներ կազմակերպելու համար:

5.Դասարաններում աշակերտների թվի կրճատում,ինչը կապահովի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

6.Անգլերեն լեզուն ուսումնասիրելու հնարավորության ապահովում:

ՈՐՈՇԵՑԻՆ

Վերոնշյալ առաջարկները ներկայացնել տնօրենի հավակնորդ Խ.Ղազարյանին Դպրոցի զարգացման 2024-2029թթ.ծրագիրը կազմելու համար:

Ծնողխորհրդի նախագահ՝_____Ա.Գալստյան

Քարտուղար՝_____Ն.Սեդրակյան